ՄԱՅԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Եվրոպական Միության (ԵՄ) ներկայիս 27 անդամ պետությունները իրենց հարևան երկրների հետ հարաբերությունների խորացման նպատակով 2003թ-ից առաջնորդվում են նոր ծրագրային ձևաչափով, որը կոչվում է Եվրոպայի Հարևանության Քաղաքականություն: Այս քաղաքականությունը սկսել է ձևավորվել 2003թ-ից[1], որին հաջորդեց Եվրոպական Միության համալրումը բազմաթիվ նոր անդամ պետություններով, որոնք 2004թ-ին դարձան թվով 25-ը: Հետևաբար, այս մեծ ընդարձակման շնորհիվ Եվրոպական Միությունը աշխարհագրական նոր տարածքում ընդգրկված պետությունների հետ ստիպված եղավ մշակել համագործակցության նոր մոդել:

Եվրոպայի Հարևանության Քաղաքականության նպատակն է հանդիսանում նպաստել իր հարևան պետությունների տնտեսական և քաղաքական զարգացմանը՝ հիմնվելով այնպիսի ընդհանուր արժեքների վրա, ինչպիսիք են ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը, շուկայական տնտեսության սկզբունքները և կայուն զարգացումը: Ի վերջո, եվրոպական Միությունը այս քաղաքականության միջոցով նպատակ է հետապնդում հաստատել անվտանգություն, կայունություն և բարեկեցություն իր հարևան պետություններում՝ բարեփոխումներ իրականացնելով այնպիսի ոլորտներում, որոնք համեմատաբար ընդհանուր են այդ պետությունների համար: Դրանք են՝ քաղաքական և անվտանգության հիմնախնդիրները, տնտեսական և առևտրի հիմնահարցերը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, տրանսպորտը, էներգետիկան, գիտությունը և մշակույթը: Եվրոպայի Հարևանության Քաղաքականությունը (ԵՀՔ), առաջարկելով տնտեսական և քաղաքական ինտեգրացիայի որոշակի աստիճաններ, որպես կանոն չի ենթադրում անդամակցություն Եվրոպական Միությանը ԵՀՔ-ում ընդգրկված պետությունների կողմից: Սակայն, միևնույն ժամանակ, Եվրոպական Միությունը չի բացառում իր հարևան պետությունների հետ ունեցած հարաբերությունների հետագա զարգացմանը մեկ այլ ուղղությամբ:

[1] Communication from the Commission to the Council and the European Parliament, Wider Europe-Neighbourhood: A new framework for Relations with our Eastern and Southern Neighbours, COM(2003) 104 final.

Եվրոպայի Հարևանության Քաղաքականության մեջ ընդգրկված են Հայաստանը, Ալժիրը, Ադրբեջանը, Բելոռուսիան, Եգիպտոսը, Վրաստանը, Իսրայելը, Հորդանանը, Լիբանանը, Լիբիան, Մոլդովան, Մարոկկոն, Պաղեստինի ինքնավարությունը, Սիրիան, Թունիսը և Ուկրաինան: Ռուսաստանի Դաշնությունը և Եվրոպական Միությանը անդամակցող պետությունները չեն ընդգրկվում Եվրոպայի Հարևանության Քաղաքականության մեջ: Ակնհայտ է, որ այս քաղաքականության ներքո համախմբվել են պետություններ, որոնք ոչ միայն աշխարհագրական առումով, այլ նաև քաղաքական և տնտեսական զարգացման մակարդակներով միմյանցից լիովին տարբերվում են: Դեռ ավելին, իրենց աշխարհագրական դիրքի պատճառով դրանցից մի քանիսը երբեք հնարավորություն չեն ունենա անդամակցելու Եվրոպական Միությանը[2]: Մինչդեռ նրանցից որոշ մասը երբևէ կկարողանան անդամակցել Եվրոպական Միությանը, եթե բավարարեն Մաաստրիխտի պայմանագրի 49-րդ[3] հոդվածով սահմանված պահանջները: Դա է պատճառը, որ Եվրոպայի Հարևանության Քաղաքականությամբ նախատեսված նպատակներին հասնելու համար ԵՀՔ-ում ընդգրկված յուրաքանչյուր պետությանը ԵՄ-ն ցուցաբերում է առանձնահատուկ մոտեցում՝ կախված տվյալ պետության քաղաքական դրությունից, սոցիալ-տնտեսական զարգացումից, ձեռքբերումներից և այլն:

Եվրոպայի Հարևանության Քաղաքականության իրականացման առաջին քայլը հանդիսանում է ԵՄ Հանձնաժողովի Ազգային զեկույցը, որի միջոցով գնահատվում է ԵՀՔ-ում ընդգրկված պետության տնտեսական զարգացման մակարդակը, քաղաքական դրությունը, որը հիմք է ծառայում այդ պետության հետ համապատասխան հարաբերություններ հաստատելու համար: Առաջին Ազգային զեկույցները հրապարակվել են 2004թ-ի մայիսին, երբ առաջին 7 պետությունները ընդգրկվեցին Եվրոպայի Հարևանության Քաղաքականության մեջ: Դրանց հաջորդեցին 2005թ-ի մայիսին հրապարակված Ազգային զեկույցները Հարավային Կովկասի պետությունների՝ այդ թվում Հայաստանի Հանրապետության հետ: Եվրոպայի Հարևանության Քաղաքականության իրականացման երկրորդ քայլը հանդիսանում է ԵՀՔ Գործողությունների Ծրագրի մշակումը ԵՀՔ-ում ընդգրկված յուրաքանչյուր պետության համար: Գործողությունների Ծրագիրը քաղաքական փաստաթուղթ է, որում ուրվագծվում են Եվրոպական Միության և ԵՀՔ-ում ընդգրկված յուրաքանչյուր պետության միջև համագործակցության ռազմավարական նպատակները: Այն արտահայտում է յուրաքանչյուր պետության հնարավորությունները, Եվրոպական Միության հետ ունեցած փոխադարձ շահերը, ինչպես նաև այն առաջնային ոլորտները, որոնցում անհրաժեշտ են բարեփոխումների իրականացում 3-5 տարվա

---

[2] Conclusions: Squaring the ring of friends. Introduction: the European Union and its neighbours after the 2004 enlargement. Steven Blockmans and Adam Lazowski, page 613, 2006.

[3] Եվրոպական Միության Հիմնադրման մասին պայմանագիր,1992 թ, Մաաստրիխտ:

ընթացքում: Հայաստանի Հանրապետությունը ևս մշակել և ընդունել է ԵՀՔ Գործողությունների Ծրագիր, որը ԵՄ Հանձնաժողովի կողմից քննարկելուց հետո հաստատվել է 2006թ-ի նոյեմբերի 14-ին:[4]

Եվրոպայի Հարևանության Քաղաքականության իրականացման հաջորդ քայլը հանդիսանում է ԵՄ-ի կողմից տրամադրվող ֆինանսական և տեխնիկական օժանդակությունը, որը արտահայտությունն է գտնում Ազգային Ռազմավարության և Ազգային Ցուցիչային ծրագրերում: Հայաստանի Հանրապետությունը ևս մշակել և ընդունել է Ազգային Ցուցիչային ծրագիր, որը գործելու է 2007 թվականից մինչև 2010 թվականը: Այս ժամանակահատվածում Եվրոպայի Հարևանության Քաղաքականության Գործիքով նախատեսված բարեփոխումների իրականացման համար Եվրոպական Միության կողմից Հայաստանի Հանրապետությանն է տրամադրվել 98,4 միլիոն եվրո[5] ֆինանսական միջոցներ:

Հայաստանի Հանրապետության 2006թ-ի նոյեմբերի 14-ին հաստատված ԵՀՔ Գործողությունների Ծրագիրը ընդգրկում է առաջնային բարեփոխումների իրականացման հետևյալ ոլորտները[6].

1. Ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, դատական համակարգ և կոռուպցիայի դեմ պայքար
2. Մարդու իրավունքներ
3. Տնտեսական զարգացում, աղքատության դեմ պայքար և կայուն զարգացում
4. Ներդրումային քաղաքականություն
5. Օրենսդրության և վարչարարության մոտարկում համաձայն եվրոպական նորմերի
6. էներգետիկ ռազմավարության մշակում, ներառյալ Մեծամորի ատոմակայանի հնարավորինս շուտ փակում
7. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում
8. Տարածաշրջանային համագործակցություն

Հայաստանի Հանրապետության ԵՀՔ Գործողությունների Ծրագրի ուսումնասիրությունից երևում է, որ տվյալ փաստաթուղթը հատկանշական է նախևառաջ տնտեսական տեսանկյունից: Մասնավորապես, այն նախատեսում է Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև առևտրային և տնտեսական հարաբերությունների խորացում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական օրենսդրության մոտարկում Եվրոպական Միության ստանդարտներին: Հետևաբար, այս միջոցառումների համակարգը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ներդրումային քաղաքականության իրականացմանը, տնտեսական աճին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական Միություն կատարվող արտահանումներին[7]:

Հայաստանի Հանրապետության ԵՀՔ Գործողությունների ծրագիրը ուշադրության է արժանի նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման մասին դրույթի տեսանկյունից: Հայաստանի Հանրապետության

---

[4] http://www.celi.am/eng/Library/EUArmeniaCooperationdocuments/tabid/73/Default.aspx
[5] http://ec.europa.eu/external_relations/armenia/index_en.htm
[6] Տե՛ս ԵՄ-Հայաստանի Հանրապետություն ԵՀՔ Գործողությունների Ծրագիր, 2006թ. նոյեմբերի 14
[7] http://www.insideeurope.org/index.php?id=443

Գործողությունների Ծրագրում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար հաշվի է առնվում ինքնորոշման սկզբունքը, իսկ Ադրբեջանի ԵՀՔ Գործողությունների Ծրագրում[8] Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար շեշտվում է ոչ թե ինքնորոշման, այլ տարածքային ամբողջականության սկզբունքը:

2006թ-ին Հայաստանի Հանրապետության ԵՀՔ Գործողությունների Ծրագրի հաստատմանը հաջորդել է դրա իրականացումը, որի իրականացման սկզբնական արդյունքները հրապարակվել են Եվրոպական Միության Հանձնաժողովի կողմից 2008թ-ի ապրիլի 3-ին[9]: Արդյունքները վկայում են, որ 2007թ-ին կատարված ուսումնասիրությունների հետևանքով ՀՀ-ում արձանագրվել է առաջընթաց այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են օրենսդրական բարեփոխումները, մասնավորապես՝ 2005թ-ի Սահմանադրական բարեփոխումները, որոնք հանգեցրեցին մի շարք փոփոխությունների ամբողջ օրենսդրական համակարգում: Քայլեր են իրականացվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ օմբուդսմենի, ինստիտուտի շրջանակներում՝ ՀՀ չափանիշները համապատասխանեցնելով միջազգային ստանդարտներին, որոնք Մարդու իրավունքների պաշտպանին հնարավորություն են ընձեռել մարդու իրավունքների վերաբերյալ բողոքները ուսումնասիրել և ընդգրկել օրենսդրական գործընթացներում: Կատարվել են նաև դատական բարեփոխումներ, որոնք հանգեցրել են 2007թ-ին Դատական օրենսգրքի և Վարչական ընթացակարգի մասին օրենսգրքի ընդունմանը: Դրանք իրենց հերթին ծնավորել են 2008թ-ից գործող դատական նոր համակարգ, որում նախատեսվել է վարչական դատարանի ստեղծումը: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական և սոցիալական բարեփոխումներին, Հայաստանի Հանրապետությունում Եվրոպայի Հարևանության Քաղաքականության իրականացման արդյունքում զարգացում է նկատվել մակրոտնտեսության մեջ: Մասնավորապես, 2007թ-ին արձանագրվել է տնտեսական աճ 13,7%-ով, իսկ 2008թ-ի հունվարին արտահանումները ավելացել են 2,4%-ով և ներմուծումը՝ 37,4%-ով:

Բարձրագույն կրթության ոլորտում նույնպես իրականացվել են բարեփոխումներ՝ Բոլոնյան Ընացակարգի ներքո, որը Տեմպուս ծրագրի միջոցով կատարելագործել է Հայաստանի Հանրապետության համալսարանները վարչական և կազմակերպա-կառուցվածքային գործունեության տեսանկյունից: Տեմպուս ծրագիրը հնարավորություն է ընձեռել Հայաստանի համալսարաններին Եվրոպական Միության համալսարանների հետ իրակա-

---

[8] Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ԵՀՔ Գործողությունների Ծրագրերը հաստատվել են միաժամանակ 2006թ-ի նոյեմբերի 14-ին

[9] Commission of the European Communities, SEC(2008)392, Commission Staff Working Document, Accompanying the Communication from the Commission to the Council and the European Parliament 'Implementation of the European Neighbourhood Policy in 2007', Progress Report Armenia,Brussels, 3 April

նացնել երկարատև համագործակցություն, որի շնորհիվ ընդլայնվել է գիտական և ուսանողական մտքի շարժը Էրասմուս Մունդուս ծրագրի միջոցով:

Բացի վերոնշյալից Հայաստանի Հանրապետությունում առաջընթաց է նկատվել նաև տնտեսական մրցակցության ոլորտում:Մասնավորապես Տնտեսական Մրցակցության Պաշտպանության Պետական Հանձնաժողովը ակտիվորեն աշխատել է տնտեսական մրցակցության նորմերի խախտումների հայտնաբերման ուղղությամբ և հրապարակել իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ: Դրանց հիման վրա կատարվել են բազմաթիվ փոփոխություններ տնտեսական մրցակցության վերաբերյալ օրենսդրության մեջ, որոնք ուժի մեջ են մտել 2007թ-ի ապրիլին: Այդ օրենսդրական բարեփոխումները Տնտեսական Մրցակցության Պաշտպանության Պետական Հանձնաժողովին հնարավորություն են տվել տնտեսական մրցակցության կանոնների խախտման համար կիրառել ավելի խիստ սանկցիաներ:

Վերոշարադրյալ բոլոր դրական արդյունքների հետ մեկտեղ, Եվրոպական Միության Հանձնաժողովը միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետությունում արձանագրել է նաև ոլորտներ, որոնք դեռևս պետք է կատարելագործվեն: Դրանք են արտաքին և անվտանգության քաղաքականությունը, միջսահմանային համագործակցությունը, հակամարտությունների կարգավորումը, կոռուպցիայի դեմ պայքարը, առևտրային քաղաքականությունը, կանանց և երեխայի իրավունքները, միգրացիան և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Այսպիսով, 2004թ-ին Եվրոպական Միության ընդլայնումը՝ որպես մեծ պատմական իրադարձություն, հնարավորություն է ընձեռել Եվրոպական Միությանը և Հայաստանի Հանրապետությանը զարգացնել համագործակցության շրջանակներից դուրս եկող հարաբերություններ, որոնք ներառում են տնտեսական ինտեգրացիա և քաղաքական համագործակցություն: Եվ չնայած Հայաստանի Հանրապետության ինտեգրումը Եվրոպական Միության կառավարման համակարգում հանդիսանում է լայնածավալ և երկարաժամկետ ծրագիր, այնուամենայնիվ, դրա իրականացման նկատառումով Հայաստանի Հանրապետությունը կատարում է իր առաջին քայլերը Եվրոպայի Հարևանության Քաղաքականության ներքո: Եվ թեպետ ԵՀՔ-ում ընդգրկված պետությունների (Վրաստան, Ուկրաինա, Հայաստանի Հանրապետություն) բազմաթիվ որոշ քաղաքագետներ Եվրոպայի Հարևանության Քաղաքականությունը համարում են Եվրոպական Միության անդամակցության առաջին քայլ, այնուամենայնիվ, 2007թ-ի սեպտեմբերի 3-ի կոնֆերանսը Բրյուսելում ցույց տվեց, որ Եվրոպայի Հարևանության Քաղաքականությունը ենթադրում է տնտեսական համագործակցություն, սակայն ԵՄ անդամակցություն այն չի նախատեսում [10]:

---

[10] http://ditord.wordpress.com/2007/09/05/eu-neighborhood-policy-focuses-on-economics-not-membership/